




ՆՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 109

23 ՕԴՈՍՈՍ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ



ԿԱԹՈՂՈՍԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԴԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԴՐԱԿԱՆ
ՇԱՐԱՆԱԹԱԹԵՐԹ

Երրորդ տարի Թ 23 Օգոստոս 1913 Թիւ 109

«Մերական Քառասնյայտէն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Աւանդական շարքաբերքը շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մասնաւոր ի գաւառոս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճան կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Մերական Հայրն արտաքին կ'օրհնէ յիշեալ Շարքաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նախկին Կաթ. Մի. ի սէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօպո Պիտոս Ժ. Թեղեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կրիկիոյ 23 Նոյեմբեր 1912, ընդ 60780 քուսմանաւ:

ԴԵՊՅՈՒՆ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ԹԵՐԹԵՐԸ ԸՆԹԵՐՅՈՒՄ

Բարի գաւառացիք մը կ'ընդունին հետեւեալ նամակը.

12 Յուլիս 1913

Դերոյ. Տէր Խնթազարայեց,

Ներեցիք որ Ձեզի հարցում մը ընեն, որուն պատասխանը մեզի համար շատ օգտակար է: Գէշ գրէր կարդալու վնասին վրայօք գրած էիք ժառանգական. ասոր եւ կատարեալ հանդուած եւ: Բայց կարծիք կ'ընեն թէ պարզ թերք կարդալ անվնաս լինի մեր ժողովրդին, թէ ալ յայտնի չէր որ անոր համար մը չունենայ՝ թեպէս մեր հայրնաւոր հաւատակ կարծիքը կը պաշտպանէ: Ես կ'ըսեմ թէ արդար դաստիարակ ընել կարեւոր

համար անկէ ընդդիմադիր գրութիւններն ալ պիտի կարդայ, որ եւ իցէ գոյնէ ալ չլինի: Այս ընթերցումը վնաս չ'ընէր. որովհետեւ կանցնի կ'երթայ. մեր թերքերն արդէն վեր ի վերոյ կը խնայագրուին. գիտնական ցուցումներ չկան անոնց մէջ, արդէն գրողները խորունկ ստիպած չեն, եւ գիտաւորաբար փառաբանական եւ ազգային շուրթեր կը պարունակեն:

Իսկ Մեծնուս դասաւարտանոցաւ: Բնականաբար եւ չեն փնտրուեր դասաւարտող եկեղեցական իշխանութիւնը. կը հնազանդիմ: Բայց չէ՞ որ նմապէս հշտարիտ կաթողիկէ մըն էր. կը պաշտպանէր Կաթողիկէութիւնը եւ կը գովուէր ալ, նոյն իսկ Եպիսկոպոսներէն ու Կաթողիկոսներէն:

Դուք ի՞նչ կ'ըսէք այս բաներուն, ինչո՞րով: Ողջ յերոսք, եւն.:

Դ.

Անկեղծութեամբ գրուած այս նամակին յօժարակամ կ'ուզենք պատասխանել, համառօտիւ լուսաբանելով իր առաջարկած խնդիրները:

Պէտք է գիտնալ նախ որ ամէնքն ալ կոչուած չեն դատաստան ընելու, քննելու, դատելու, վճռելու. կամ հարկաւոր տաղանդը, կամ ժամանակը, կամ միջավայրը, կամ հնարաւորութիւնը կը պակսի շատերուն. մարդիկներու ստուար մեծամասնութիւնը հոսանքէն կը տարուի, կ'առաջնորդուի, ըլլայ բարի ըլլայ չար սկզբունքի տէրերէն. բայց հիմա դժբախտաբար չարը կը ձգտի ընդհանուր տիրապետելու, նաեւ խեղճ Հայոցս մէջ: Ո՞վ պիտի կարենայ ցոյց տալ հայ թերթ մը, որ կատարելապէս զերծ և ազատ ըլլայ ամէն հոգեւոր ու բարոյական թերութենէ. ո՞րքան սակաւաթիւ են բացառութիւնները: Իսկ կես-կեսները որչափ շատ. և բուն գէշերը, անբարոյացուցիչները ո՞րքան յոգնաթիւ. աւա՛ղ: Ո՞ր պարկեշտ հայր մը, կամ լաւ ևս ո՞ր հայր իր մատղաշ զաւկին ձեռքը պիտի կարենայ տալ այսպիսի թերթ մը... անպարկեշտութիւնը, անկրօնասիրութիւնը շատ աւելի դիւրին կը սորվուի թերթէ մը, քան թէ չար ընկերէ կամ գրքէ: Քանզի արժան է գիտել թէ գրքի և թերթի միջեւ գնել ուզուած տարբերութիւնը բնաւ չկայ. անցողակի չէ որ կը կարգացուին թերթերը. միեւնոյն տպաւորութիւնը կը թողուն և աւելի. միեւնոյն գրգռիչ պատկերները, միեւնոյն յանկուցիչ երեւակայութիւնները, զզրութիւն հոսանքները, կուրացուցիչ մոլորական սկզբունքները կը բովանդակեն, անդադար կը քարոզեն, կը յեղյեղեն. մանաւանդ թէ իրենց շարունակական, հանապազօրեայ ըլլալով և անխափր ամէն տեսակ նիւթ պարունակելովը շատ աւելի փաստակար են քան գրքերը. և կ'արժեն ո՛չ թէ մէկ գիրք, այլ շատ գրքեր, այլեւայլ խմբագիրներու որակով և քանակով, որոնք անդադար կը ցուցադրեն, կը թելադրեն, կը սորվեցնեն իրենց կարծիքը, սխալները, ապականեալ բարքերը, երբեմն պատկերով մը, երբեմն ոճով մը, երբեմն նոյն իսկ բառով մը, բայց միշտ և ան-

դադար: Թոյնը գեղեցիկ ծրարիկներու մէջ ըլլայ փաթթուած կամ որ եւ իցէ թղթի կրտորի մէջ ճիւղակուած, միշտ թոյն է: Պէտք է նաեւ նկատի առնել որ թերթին տէրերը առ հասարակ կը կեղծաւորին՝ միջավայրին համաձայն: Ինչպէս գէշ ապրանքներ ծախողները — Հրեայ, Գերման, Լեն, — զանոնք կ'ոսկեզօծեն կը զարգարեն՝ գնողները խաբելու համար. այսպէս ալ թերթերը ստէպ կը չարեն, կը անդուրեն, կը գեղազարդեն իրենք զիրենք. բայց այդ մոսկերեւութային զարդերուն տակ պահուած է թոյնը, ինչպէս ծաղիկներու տակ կը պահուի իժը. վա՛յ անգորշներուն: — Եւ հայ ժողովրդեան մէջ ո՞րչափ կրնաք գտնել զգուշաւորներ... — Օրինակը մէջ տեղ է. Ազատամարտ թերթը (որ հիմա Շանք է), Դաւենակցութեան օտկանը, գիտէ՞ք, երբ երեւցաւ, սկսաւ յայտնի մարտ պատերազմի ամէն սրբութեանց դէմ. բացայայտ քարոզեց կամ շանքեց՝ հակակեղերականութիւն, հակաքրիստոնէութիւն, նիւթապաշտութիւն, անկրօնութիւն, անաստուածութիւն: Դաւենակցականները այդպէս պէտք է ըլլան եղբր! — յայտնի սօսիլիսթներ. արդէն արեւելքի մէջ սովորած են Եւրոպայի մեղուր ընդունիլ, և ան՝ քաղաքակրթութեան անունին ներքեւ. կրնաք դատել նոյն իսկ մօտաներէ... Չեն տեսներ, չեն սիրեր աղէկը, պարկեշտը, օգտակարը, վսեմը, բարոյացուցիչը, փրկարարը, տեսականը, ո՛չ. անպատճառ պէտք է ընդօրինակել, ընդգրկել գէրը. և մարմաջ մը կը զգան անպատճառ բնութան քանդակներու դայն. իրենց ապականութեամբ չգոհանալով, անպատճառ վարակել կ'ուզեն ամբողջ ազգը, անգիտակից ազգը, խեղճ ազգը... որ իբրեւ որոջ առաջի կտրչի անմոռնչ կա՛յ... Արդ, այդ Ազատամարտ-Շանք թերթը, — արդեօք գիտեցի՞ք, — վերջերս փոխած է իր լեզուն... խրատտուններ գտնուեցան, որոնք կրկնեցին ու կրկնեցին իրենց տեսութիւնները. «Պէտք չէր խրոչեցնել հայ ընդհանրութիւնը. որ դեռ կրօնասէր էր. — եթէ այդ ընթացքով շարունակեն, Դաւենակցութիւնը ամէնուն տետի պիտի ըլլայ... պահպանողականները

պիտի հրճուին, պիտի հեղնեն, պիտի շահին. հարկ է կամայ կամայ քաշել՝ ապահով քաշելու, անպատճառ նպատակին համեմու համար... Կեռ այդ ժողովուրդը պէտք է պատրաստել... «Chi va piano, va sano; chi va sano, va lontano»!... Եւ Աquisuisurs-նանք մտիկ ըրաւ, յակամայս լոնց. խոնարհեցուց գլուխը... և փոխեց լեզուն: Բայց որչափ. ո՛հ, նա հինն է, փոխուած չէ. քիչ մը զգեստը փոխած է. ոգելից ըմպելիք վաճառող մին է որ գաղանի կը ծախէ, ահա տարբերութիւնը. էականը բնաւ չէ փոխուած. գոյնը, արտաքինը միայն փոխուած է: Միեւնոյն գաղափարները, միեւնոյն հեղինութիւնները, միեւնոյն ուրայումնները, միեւնոյն հայրոցութիւնները, միեւնոյն թոյնը. ծածկուած, աւելի անօտրացած, ուղեւծուծ (quintessence):

Ստոյգ է որ թերթերը, մանաւանդ արեւելիսները, առ հասարակ կը մրոտուին, կը լեցուին, պարսպ անդ չթողու համար, անպէտ, անխմատ, ունայնամիտ, պոռոտախօս և ստէյ անարամաբան ու տխմար յօդուածներով. կը կարծեն — գոնէ ոմանք — թէ թերթ մը աւլուհեցեալ կողով մը ըլլայ, ա՛յնչափ խառն ի խուռն և անխտիր կը խճողուին ոչնչաբանութիւնք և մերթ գարշելիք: Ստոյգ է նոյնպէս որ լուրջ կարծուած յօդուածներուն շատերն ալ արուեստակեալ և բռնազբօսեալ իմաստակութիւն են և ոչ աւելի, տգէտներուն պատրանք, գպրոցէ նոր ելած տղաք, քիչ մը ճոռոմարան. ճշմարիտ գիտութիւնէ զուրկ. փիլիսոփայութիւնէ անմասն, խոհականութիւնէ և մարդկային կեանքի ու պատմութեան հիմնական ուսումնասիրութիւնէ վրիպեալ և թափուր, քաղաքագիտութեան առեղծուածային ու բազմակնճիւղ մանուածներուն մէջ մուտ չգործած երիտասարդներ՝ կը գրեն ու կը ճամարտակեն, ըզհույս կոծեն, քնդ օգս արեւեկն, սալաքմբակ երկվարներով, գրոհ անդ տուեալ դոնյր յանդադար... Եւ ահա ճիշդ ասոր համար է որ շատ աւելի շխտակար են իրենց գրողաւորները, մեամըջ անհամ և անհիմն ըլլալուն չափ ալ սրբութեանց անօրէն հեգնող և

տգիտարար անբարեպաշտ: Միայն թէ արուեստն ունին իրենց գրողաւոր մէջ ինչ ինչ կեղծ մարգարիտներ սպրդեցնելու, անփորձաչքերու շլացուցիչ. ազատագրում՝ ժառանգազուրկ տարաբաժին գործաւոր և ռամիկ դասակարգի, արդարութեան թագաւորութիւն, բռնապետութեան և անիրաւութեան դէմ անողոք պայքար, նուաստացուցիչ նախապաշարութիւններու քնաջինջ անյայտացում, թունդ ազգասիրութիւն, օտարամերժ, անդիմադրելի ազգասիրութիւն... ևլն. ևլն., իրենց բանաձև նշանաբան ըրած:

Սյապէս կը խաբեն միամիտները... կերպարանելով ի հրեցակ լուսոյ...

Պէտք է ուրեմն զգուշանալ, միշտ զգուշանալ.

«Տեսե՛ք եւ զգոյ՛ լերուք ի խմորոյ Սադուկեցւոցն եւ Փարիսեցւոց» (Մատթ. ԺԶ. 6):

«Զգոյ՛ լերու՛ք, մի՛ ոք իցէ՛ որ զձեզ կողոսպտիցէ ճարտարմտութեամբ և մնտի խաբէութեամբ... Մի՛ մերձենար. մի՛ ճաշակեր, մի՛ հուպ լինիր, որ է ամենայն ինչ ի պէտս ապականութեան, ըստ պատուիրանաց և վարդապետութեան մարդկան» (Կող. Բ.):

(Շարունակելի)

ՄԱՀԱՑՈՒ ԿԻՒՆԱՀ

— Պուշուրուն, ագիգիմ, օթուրուն:

Պունըն իւզէրինէ միւլէհհամ, գըրմըզ սուրէթի պիր առամ քահանանըն կէօսթէրտիյի գօլթուզը սանտալիայա օթուրտը:

— Վարդապետ, պիլիօրմըսընը քի սիզ պէնիմ բուհըմը ալթիւսթ իթաինիզ:

Նէ՛ եաբտըմ քի:

— Բաղար կիւնքի օգուտըղընը իլանտան պահս իթմէք իսթէյօրում:

— Հանկի՞ իլան, իսթըրըմա կէլիէյօր:

— Ծանրմ շու մէալտա պիր չէյ օգումատըն՞դ մը. Մեզնեպէ գաւըր եազան դազէթալաւ սոյօնէ օլան բէսէր վէ վալիսէյէր մահուչափ կիւնան իչիմէս սիլէր:

— Մահուչափ կիւնահ, էլպէթթէ...
պունահ հիշ շիւպէէ իսթէմէզ: Եւ օ կիպի
ապօնրմանլարտան կէրի տուրուլար, հա
եօգսա, ափլըք եօգտրր: Կավի նիյէթլէրի
օլմայան քիմէլէրէ արձակում վէրիլէմէզ:

Միւսաֆիրին նէշէլի սիմասը պիր ազաճըզ
րէնկինի աթար:

— Շէյ... կէօրիւյօրսուհուղ քի պէն...

— Եանի, ապօնէ օլմուշսընըզ, տէյիլ
մի:

— Ֆապաթ նասըլ ապօնէ օլտուղումը
պիլիյօրմըսընըզ, էվէլճէ ալթը այ պանահ
մէճճանէն կազէթա եօլլատըլարտա...

— Սիզ տէ տէվամ իթտինիզ, էօյլէ մի:

— Է, թապիի...:

Վարդապետ միւշֆիզ պիր նապարա մու-
խաթապընահ պազար վէ քէնտի քէնտինէ,

— Պազ սէն շու գաթօլիքլէրէ, պու նէ
գատար ճէհալէթ, եախօտ պու նէ նամէրտ-
լիք աիր...! տէր իտի:

Միւսաֆիր էլտիվէնլէրինի գուրտալայա-
րազ վարդապետին ճէվապընահ ինթիզար ի-
տիյօրտը:

— Չարէսի բէք գօլայ տըր, եազըլմըշ
օլտուղընըզ ֆէնահ կազէթատան վազ կէշէրսի-
նիզ, իշ պիթէր:

— Ֆապաթ, վարդապետ, պէն պուրտա
պիր ֆէնալըզ կէօրէմէյօրմ: Տօղրուսը, պիր
կազէթա օգուսազ պէօյիւք պիր կիւնահ օլ-
տուղընը տա անլայամայօրմ:

— Ֆէնալըք մը, կիւնահ մը եօգ...
Ազիզիմ, կէօրմէյօրմըսընըզ քի պու սուրէթլէ
սիզ բարա վէրէրէք մէզհէպինիզի թախրիպ
իթմէյէ եարտըմ իտիյօրսընըզ... Հիւսնի
ախլազը, Գիլիսայը... Բարայը... քահանա-
լարը թէրզիլ իթմէյէ վասիթա օլույօր, տիւշ-
մէնլէրինիզ թախսիսաթը նազտիյէ վէրմիշ
օլույօրսընըզ:

— Սէնէտէ 20 ֆրանք վէրմէքլէ նէ՞ օ-
լուր...

Վարդապետ պիր նազարը հայրէթլէ պա-
դարազ,

— 20 ֆրանք վէրմէքլէ նէ՞ մի օլուր...
Պու 20 ֆրանքը օն պին իլէ զարպ իտէճէք
օլուրսան, իշթէ սանահ իքի եիւզ պին ֆրանք

հասըլ օլուր: Եյէր պիւթիւն գաթօլիքլէր
եազըլմըշ օլտուղլարը ֆէնահ կազէթալարըն
ապօնրմանլարընը քէսէճէք օլտալար, արթըզ
ֆէնահ կազէթալարըն գօլլարը, գանատալարը
գըրըլըպ ուշամազ օլուրլար... տէր:

Միւսաֆիր պիր դաշ տապիւտ թէէմիւլ-
տէն սօնրա,

— Տէմէք տիր քի մահուչափ կիւնահըն
սէպէպի պու 20 ֆրանք մը տըր, օ հալտէ
պէն գապահաթըմըն ափլը իշին 40 ֆրանք
վէրիւրմ, օլմա՞զ մը, տէր:

Վարդապետ օնուսն սէօղիւնիւ գաթ իտէ-
րէք:

— Ազիզիմ, եալընըզ մէսէլէ բարատա
տէյիլ տիր, հէմ տէ բարա մէսէլէսի էսքսի
տէյիլ տիր: Չիւնքի ֆէնահ պիր կազէթայա
ապօնէ օլմալլա, նազտէն օնա մուսվէնէթ
իթմէքտէն պազա, օնը թէշճի իթմիշ օլու-
յօրսընըզ... մահալլէնիզէ շէքլիք վէրիյօր-
սընըզ վէ քէնտի բուհընըզ մէզհէպէ գա չը
մայէլէրլէ մայէլէնտիրիյօրսընըզ... օնը բօ-
մանլար չէօրլիւյիւնէ մահքիւմ իտիյօրսընըզ:

— Աման վարդապետ, պէն օ կէօրտիւ-
յիւմ մէզհէպէ գարչը սէօղլէրէ հէնմիյէթ
վէրմէմ օ կիպի նօգթալարը չարչապուզ աթ-
լարմ:

— Սիզ... պէլքի: Եւ գարընըզ... զը-
ղընըզ... պէսլէմէլէրինիզ...

— Էվտէ պէնտէն մատա կազէթա օգու-
յան եօգ տըր:

— Պուստ էմիւն մի սինիզ:

— Սուրէթը գաթիյէտէ էմին իմ:

— Շու հալտէ, սիլինքիլէր Եւանըն նէս-
լինտէն տէյիլլէր իմիշ տէմէք տիր:

Միւսաֆիր պիր թավըր մախսուս իլէ,

— Վարդապետ էֆէնտի, պէն տիպգաթ
իտէրիմ: Օ կազէթա գաթիէն պէնիմ մատա-
մըն իւզէրինտէն պիր ելրէ կիթմէզ: Էմրիմ
գաթի տիր. օրայա քիմսէ կիթմէզ, օրասը
պէնիմ ուղլէկեահը մուգատտէսիմ տիր, պէ-
նիմ էվրազըմ մուգատտէս տիր: Վայ օրայա
եազլաշանա... տէր:

— Նէ՛, սիլէ խապէ՛ր մի վէրէճէքլէր
քի...

— Պէնիմ կէօղլիւմ եօգ մը...

— Ինանընդ պանա, ազիդիմ էֆէնտի, ապօնումանընդը քէսինիզ, Մասանըլ ի զէ-րինտէ սթրիքնին կիպի պիր զէհիր պուլլն-տորմայաճաղընը կիպի, ֆէնա կազէթա տա պուլլնտորմայընը, Իշթէ պու սուրէթլէ հէմ վիճտանընըլ լահաթ օլուր վէ հէմ տէ սահի՛ դաթօլիյէ թէրէթթիւպ իսէն վազիյ-ֆէնիզի իյֆա իթմիշ օլուրսընըլ:

— Թէշէքքիւր իտէրիմ, վարդապետ է-ֆէնտի, պու խուսուստա տիւշլանիւրիւմ:

Միւսաֆիր այաղա գալգար վէ քէմալը նէզաքէթլէ սէլամ վէրէրէք չէքիլիւր:

Գարու գաբանտըլընտա վարդապետ քէն-տի քէնտինէ,

— Վարսըն երլանը գօյնուստա պէօյիւթ-սին, մատամ քի էօյլէ արգու իտիօր, տէր:

էֆէնտի տէ շու եօլտա միւլահաղա իտի-օրտը:

— Պու զէվալը վարդապետլէր տէ հէր չէյի միւպալէզալը կէօրիւլէր... մէզնէպի տի-քէնտին պիր սուր իլէ չէվիթիւլէր:

(Մապասի վար)

ԵՐ. ՏԵՐ ԿՈՍԻՏԱՍ ՆԱՀԱՏԱԿԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վ. Ս. Ս. Ն.

յիսին ժամանակիս ազգիս մեռոյ հախտակութեան որ ընդ միմեանս վասն Գարոյիկութեան, եւ յա-ղապա որոյ յայնեկոյ ումնն կերտոյ շուստորից կոյեցեկոյ յամանց, եւ վասն նորին գործոց եւ վարուցն, եւ վասն համախոնից նորին:

Արդ զայս գիր ի Տեառնէ Մինասայ ըն-կալեալ Աւետիք վարդապետն՝ ծածկեաց յա-ուրսն յայնոսիկ եւ ոչ յայնեաց ումնք. եւ սպասեալ մնայր խորամանկն գալստեան սե-ւազլիտոցն այնոցիկ, զի գնիւթն նիւթիցն ի նոցանէ առցէ օճն դարանակալ: Իսկ նոքա եկեալ հասին յետրէնէ, հանդերձ կասկածա-նօք եւ երկիւղիւ, վասն ապեքախտութեանցն իւրեանց. եւ մտեալ առ Աւետիք վարդապետն եւ նա սիրով ընկալաւ զնոսա եւ տեղի տուեալ նոցա եւ քաղցրութեամբ հարցանէր զնոսա եւ

ասէր. ո՛վ եղբարք, զոր տեսէքն եւ զոր լուայքն ի Ս. Երուսաղէմ պատմեցէք մեզ: Իսկ նոքա որովհետեւ զտեղի գտեալ սկսան զրողոք բառնալ, զկական բարձեալ եւ ողբա-լով ամբաստան լինել զտեսնէ Մինասայ, զզանազան եւ զպէսպէս բարուրս յօրինել, յօղաւորել եւ կարգաւորել ըստ չար նախան-ձուն իւրեանց: Որպէս ասէ Տէրն թէ «Մարդ չար ի չարէն բղիւն զչար»: Ոչ ի միտ ածե-լով վատարախտիցն զպատուիրանն աստուա-ծային, եւ ոչ իսկ երկնչելով ի նմանէ, որ հրամայէ մեզ ոչ խօսիլ զսուտա եւ ոչ սուա վկայել: Արդ սոքա ժպրհեալ եւ լրբեալ իւ-րեւ զՅուդաո, որ ոչ զմի կամ զերկուս այլ զբաղումս եւ զանազան երդմամբ հաստա-տելով ասել նախ թէ ինքն նստէր յաթոռով եւ ի Փափէն եկեալ սեւազլիտոցն զքարոզս ասել տայր: Երկրորդ՝ յերուսաղէմայ ապրա-նացն եօթն ձիաբեռս ապրանք եւ դրամ յիւ-ճէմիստան տարաւ, այսինքն ի Ս. Էջմիա-ծին: Երրորդ զջուր էարկ ի սուրբ խորհուրդն յորժամ պատարագեաց ինքն: Չորրորդ զՓա-փին Լեւոնի պատկերն կանգնեաց եւ ժողո-վրդեանն ետ երկրպագանել: Հինգերորդ զՍո-մանցւոց թագաւորի զանունն երարձ եւ ոչ յիշատակեաց ի Ս. Պատարագն զոր յառաջ: Եւ յիշատակեալ, Վեցերորդ զարծաթ եւ զոս-կին, զկահն եւ զսպասս սուրբ տան Երու-սաղէմի, այսինքն զխաչսն եւ զսկիհնն հա-լեալ եւ մսխեաց ի կոկորդս իւր: Եօթներորդ զտեղիս եւ զվիճակս Հայոց ազգիս փռանկաց ազգին ծախեաց: Ութերորդ զՓափն եւ զքը-րիստոնէից թագաւորսն յիշատակեաց ի պատարագն եւ միայն վասն նոցա կենդա-նութեան պատարագեմ ասաց: Իններորդ զմեզ գանեաց ամէն մի անձին երկու հարիւր բիրս եղարկ¹ թէ ֆռանկ եղէք:

Եւ այլովք բազմօք մասնաւոր բարանօք՝ զբարուրս ի վերա նորայ բարեցեցին որք ա-մնեւին սուտ էին եւ ոչ ճշմարիտ որպէս զհայրն իւրեանց ստատնայ²: Եւ ասէ ցնոսա Աւետիք վարդապետն, եթէ զայս վկայու-

¹ Զարկաւ:

² Բարբառանօք:

³ Հմմ. Յովհ. Բ. 41:

Թիւնս զորս վկայեցիք առաջի իմ, միթէ առաջի ժողովրդոց ասէ՞ք զայս: Պատասխանի ետուն նոքա եւ ասեն ոչ եթէ միայն առաջի ժողովրդեանն ասեմք, այլ եւ առաջի թագաւորի դիւանին վկայեմք անահ եւ անկասկած¹: Եւ մինչդեռ սոքա ի վերայ այսր խորհրդոց վարանէին՝ ապա տեսցուք ռոտմանօր զխտամպօլ թէ որո՞ց խորհրդոց վերայ կային: Բանդի յաւուրս յայտոսիկ մինչ դարձան ուխտաւորքն Ս. Երուսաղէմի յխտամպօլ, դրդեալ ոմանք ուխտաւորք չարայուչք եւ սուտակասպասք ուսեալք եւ աշակերտեալք յարբանեկաց չարին այսինքն ի վերոգրեալ սեւագլխոցն եթէ ի Ս. Երուսաղէմ եւ եթէ ի ճանապարհին, քանզի զչարիսս զայս միշտ նիւթելով ընդ միմեանս ի ծածուկ, եւ եկեալ յխտամպօլ գրգռեցին զոմանս ի հացածախ² վարդապետացն, եւ զոմանս ի հիւսան զալֆայիցն, եւ մօտին ի ծածուկ առ Սարու Մատթէոս Կաթողիկոսն Սսոյ³, որ եւ սա Կեսարացի պոլով, զի աստ էր յաւուրս յայտոսիկ եւ զխորհուրդ առին ընդ նմա: Եւ ի վաղին սիւնհոգոս արար Սարու Կաթողիկոսն յԱստուածածին եկեղեցին որ եւ կուտեցան ի վերայ նորա, եւ փոխանորդ Աւետիք վարդապետին Ամատիացի Յովհաննէս վարդապետն անդ. եւ ի սիւնհոգոսին վկայեցին ոմանք զսուս վկայութիւն որպէս զվարդապետս իւրեանց եւ զրպարանցին զՏէր Մինաս վարդապետն եւ սոքա: Բանդի սուս վկայքս այսօքիկ փառաւոր մարդիկք էին եւ նոր մուղտեօրք⁴: վասն այնորիկ հաւատացին բանից նոցա: Մանաւանդ սուս վկայութիւնքն նոր մուղտեօսեացն կարի յոյժ եւ հաճոյ էր կամաց Կաթողիկոսին. քանզի սոքօք կամէր զինքն յառաջ արկանել յառաջնորդութիւնս Երուսաղէմի. քանզի նա յէտրէնէ ջանայր եւ սա յխտամպօլ փութայր, ճէնկ՝ ճիյէր ուսթունէ⁵, եւ սա Կաթողիկոս զողով այնու

¹ Մարդ կը սարսառայ այսքան անիգճութեան առջեւ:
² Հացագործ վարպետ (սւսթա պաշը):
³ Յետոյ ուրացող, ինչպէս կը պատմուի Երանելւոյն վարքին մէջ:
⁴ Մհտեօր կամ Մահտեօր (զմահ Տեառն տեսի?) Հանի:
⁵ Թրքերէն առակ. Կոիւր՝ լեարդին համար է, լուսագոյն պատառը իւրացնելու համար:

դիտաւորութեամբ զի զմիւսոն օրհնեացէ ի Ս. Աթոռն Երուսաղէմի, եւ իբր թէ զարձան կանգնեացէ որպէս զեղիազար Կաթողիկոսն եւ փառաւորեսցի յազգէս մերմէ: Եւ արդ այսու ուխտիւք մոլեալք երկու կողմս, քանզի մոլութեան ոգին հարեալ զամենեսեան միանչամայն մոլորեցոյց:

Եւ իբրեւ լուսւ զայս Աւետիք Փաթրիկն թէ Սարու Կաթողիկոսն եւս ցանկայ պատրիարք լինել Երուսաղէմի՝ գրեաց սմա զպիր նախատանաց, թէ՛ ե՛լ եւ կորիբ յայդմ վայրէ, զի մի զվնասս կրեսցես յինէն, եւ ո՛չ գնաց: Եւ ապա ինքն առեալ զսեւագլուխն զայնոսիկ եկեալքն յԵրուսաղէմէ եւ զայլս ճարեալ աստի եւ անտի այլ եւ երիցանց ոմանց ի զլուխն զվեղարս անցուցեալ եւ նոքօք եւ լեալ ի դիւան թագաւորին¹ արզուհալիւ եւ ամբոխիւք եւ զբողոք բարձեալ աղաղակեցին գողալով եւ ամբաստանեցին զՏեառնէ Մինաս վարդապետէն, եւ վկայեցին զվկայութիւնս սուսս որպէս վերոյգրեցաւ: Եւ թագաւորն յանձն արար Վէզիրին. իսկ Վէզիրն յոյժ հարցափորձ եղեալ վասն իրացս յայտմանէ, քանզի գիտէր իսկ թէ վասն նախանձու զսուս խօսէին, եւ յաճախէր կերպիւ իւրք եւ յերկարեալ զբանն յամեցուցանէր զի վերահասու լինիցի ճշմարտութեան: Իբրեւ ետես Աւետիք վարդապետն զի յամէ, ապա գնաց առ Մուֆթին իւր, զոր յառաջագոյն ծանուցեալ էր նմա եւ նա առժամայն առաքեսց զգիր իմն առ Վէզիրն ասելով թէ զոր ինչ եւ ինչրեսցէ Ռուհպանս իմ զայն անյապաղ կատարեսցիք. որ եւ փութապէս կատարեաց զհայցուածս նորա: Եւ եղեւ Աւետիք վարդապետն յերկուց աթոռոցն առաջնորդ²:

¹ Տիվանը Հիւսայուն, հին ատեններու Նախարարաց ժողովն է, որուն կը նախագահէր Վէզիրի ազէմ (ամենամեծ վէզիր, հիմա Սոսրազամ) քովն ունենալով իր օգնական վէզիրները, որոնց թիւը վերջերս հասաւ մինչեւ չորս. եւ անոնցմէ գատ Միւլեթին (հիմա Շէյխ իւլ իսլամ դենպետն) իւրս եմէնիսն (հիմա Արսաֆին գործոց նախարար) են: Պետութեան հին ժամանակները թագաւորը անձամբ կը նախագահէր այս ժողովքին որ նաեւ Արդարութեան ժողով ալ էր: Իսկ վերջերս շատ քիչ անգամ կու գար թագաւորը:

² Այս է՝ Պոլսոյ եւ Երուսաղէմի պատրիարք միանգամայն, հակառակ իր նախկին երգման:

Յաւուր տօնի Տապանակի Տեառն ի Նա-
ւակատեաց շաքաթի օր Վարդավառին... ամ-
սոյ...¹ և հազար հարիւր յիսուն և մի թը-
ւականիս մերոյ, եւ յետ աւուրց ինչ անցա-
նելոյ ի վերայ, յաւուր շաքաթու ի տօնի
Ս. Ժողովոյն Եփեսոսի Օգոստոսի ութ, եկն
յԱղբիւնուպոլսէ և եմուտ ի քաղաքս Կոս-
տանդինուպոլիս: Ընդ որում յառաջ ելեալ
քահանայք քաղաքիս ամենեքեան մեծք և
փոքր, ոմանք ձիաւորք մինչ ի Չէքմէճէ, և
ոմանք հետեակք և ոմանք նաւով գնա-
ցեալք յարեւմտից կողմն քաղաքիս ի գետն
որ կոչի յունական բարբառ Մաքրի հօրեայ,²
ընդ որս և Սարու. Կաթողիկոսն Մաթէոս
և հիւսան Կեսարացի դպֆայք և յանդիման
եղեն նմա երկրպագութիւն մատուցանելով
չնորհաւորեցին զիշխանութիւնս նորա: Իսկ
նա էր զարդարեալ փառօք, նստեալ ի կառս
որ կոչի Ղօչի,³ և այլազգիք վառեալ զինուք
յառաջ և յետ կոյս ընթանային և իւրքն ընդ
նմա, սեւազլուխք և աշխարհականք մինչեւ
քառասուն արք: Եւ իջուցեալ գնա զկա-
ռացն և մուծին յայգւռջ միում հանդերձ եր-
գօք շարականօք և կազմեցին զսեղան Կե-
սարացի դպֆայքն և նստեալ կերան և արբին
բազում ուրախութեամբք:

Եւ իբրեւ սկսաւ երեկոյանալ ելեալ ան-
տի բազում ամբոխիւ ձիաւորեալ քահանա-
յիւք և ժողովրդովք, մեծաշուք փառօք ե-
կեալ եմուտ ի քաղաքս ընդ գղւտն Նօթմեակ
Կլայ⁴ կողեցեալն, որ ուղիղ գնայ ի ճանա-
պարհն ի Ս. Աստուածածին եկեղեցին: Արդ
անդ էիր զիպեալ և տեսանէիր զստառապեալ
ազգիս մերոյ զփառաւորութիւնն ի վերջա-
ցեալ ժամանակիս: Քանզի գոռն տուեալ բը-
նակիչք քաղաքիս այլազգիք և Յոյնք մանա-
ւանդ Հայք կուտեցան զճանապարհաւն եւ
մնացին գալստեան նորա. և նոցա նախան-
ձեալ ընդ ազգս մեր ասէին Փաթրիկ կէլտի,

թէճճալ¹ կէլտիմի: Բայց մեք զայն տեսեալ
ուրախութեամբ լցեալ ասէաք. օրհնեալ է
գալուստ երկրորդ Լուսաւորչիդ մերոյ, առ ի
վերստին նորոգել և պայծառացուցանել
զստառապեալ ազգս մեր²: Եւ եկեալ ի Ս.
Աստուածածին եկեղեցին, որ ի Գում Գաբին
և անդ յօթեցաւ իբրեւ զմի Սամանցւոց փա-
շայիցն. քանզի ի դրունս նորա միշտ կանգ-
նէին տաճիկք հասարդիք եւ մոմճիք, որպէս
ի դրունս նոցա զտիւ եւ գիշեր եւ պահէին
սուսերօք եւ բրօք:

Իբրեւ ետես գոռոզն այն երկրորդ Յու-
լիանոսն զի յառաջանայր ամենայն իրօք ըստ
անիրաւ արորժակին իւրոյ, և յլիացեալ
փառօք անցաւորիս, զի ոչ ոք էր որ ընդդէմ
դառնայր բանից և կամաց նորա: Յայնժամ
անդգամաբար արձակէր զձեռս առ քահա-
նայս ոմանս և առ ժողովրդականս. քանզի
զոմանս արգիլէր յեկեղեցւոյ վասն պատճառի
Կաթողիկոսեան, և զոմանս բանաբերեալ եւ
զոմանս արգիլեալ վասն այրուութեան ասե-
լով՝ եթէ ոք ի քահանայից այրի իցէ՝ լոնս-
ցէ ի քահանայութեանէ. որ եւ լոնցոյցն իսկ
Եւ զոմանս ի քահանայից եւ ժողովրդոց բրա-
ծեծ առնէր հրապարակաւ յոչինչ պատճառաց
եւ զոմանս արկանէր ի շղթայս:

Սակայն ոմանք ոչ ժուժեալ առ այս՝ որք
ոչ էին լուեալ կամ տեսեալ պիսպիսի³ իր ի
վաղեմի ժամանակաց, վասն որոյ մատեան
առ զայնախամ՝ փաշա քաղաքիս եւ ետուն
նմա զարդուհալս զի հրաման տացէ նոցա զի
առաջի դատաւորին դատաստանսու խօսեացին
ընդ սոտիս իւրեանց: Բայց Փաթրիկն յառա-
ջագոյն հոգացեալ էր զգոռն ամիրային կա-
շառօք, մանաւանդ թղթով Մուֆթիուն⁴ յո-
րում գրեալ էր եթէ Փաթրիկն մեր զոր ինչ
բանս ունիցի ի դրունս ձեր՝ զայն կատա-
րեալիք անյապաղ, քանզի մեր է դա: Վասն
այնորիկ մինչ արդուհալս տային, ի բունս եւ
ի կոճեղս արկանէին զարդուհալճի արսն:

(Շարունակելի)

¹ Տէճճալ, Նեռ. — Մշտնջենական է Յունաց նա-
խանք և յոթորտանքը Հայոց գէմ, բայց պէնուհ
հանդէպ առ հասարակ ամբարտաւան է իրենց վար-
մունքը:

² Հեզնութիւն է այս խօսքը:

³ Այսպիսի

⁴ Գալիմազամ, փոխանորդն Մեծ-Վեդիքի, որ ելլի
բացակայէր Պոլսէն, իր տեղը կը գնէր այս պաշտօնու-
կալը որ ինքնիշխան կը կառավարէր քաղաքը:

⁵ Միւթթիին, Գեղարեւոյն:

¹ Հոս պարագայ թողուած է թուականին տեղը:

² Մաքրի-Քէջ

³ Երկու ձիերու մէջ առկաի կապուած խցիկ մը
այժմու սէսեաներու նման:

⁴ Եւեթ Գուլէ:

Ե Ս Թ Ե Ր

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՌԱՍԻՆԻ (*)

(Շար.)

Էլիզ

Մութթէն : Այս տեղերուն արդեօք կրնա՞յ մօտենալ :

Եսթեր

Դնծի հանդէպ ունեցած սէ՛րն հընարագէտ կ'ընէ զինք :
Իրեն խորհուրդ կը հարցընեմ հեռուէն , և բիւր կերպերով
Իր խոհական պատասխաններն ինծի կու գան անխափան :
Այսքան հոգ հայր մը չի տանիր իր զաւակին փրկութեան :
Եւ արդէն իրեն զազանի խորհուրդներուն չնորհիւ ,
Յայտնեցի թագաւորին այն մահափորձն տհաւոր ,
Ջոր երկու բիրտ ըսպասաւոր նիւթեր էին իրեն դէմ :—
Ազգիս սիրով վառուած սրտիս զգացումներն եռանդուն
Այս ապարանքն են լեցուցեր աղջիկներով Սիոնի .
Փիրզ ծաղկունք նըշաւակ յախտին հովուն բռնաշունչ ,
Օտար երկինքի տակ տեղափոխուած ինծի պէս :
Յայրատ աչքերէ պատսպարեալ յարկի տակ
Անոնց կրթութեան կը պարապիմ հոգեւին :
Եւ հոն գշխոյութեան ճոխ պերճանքէն մեկուսի ,
Պարտասի՛ պատիւներէն խալառ ազատ , մտամոխ՛ի ,
Բարձրելոյն գահին առջև կը խոնարհիմ գլխիկոր .
Անծանօթ , անշուք կեանքի կը զգամ հաճոյքն անապակ .
Բայց աղգերնին , հայրենիքնին ամէն Պարսկէ կը պահեմ :
Կանչենք զիրենք . Եկէ՛ք , եկէ՛ք , օրիորդներ գեղանի ,
Երբեմնի զերութեանս հաւատարիմ ընկերներ ,
Յակոր նահապետին մատաղատի զաւակներ :

Բ. Տ Ե Ս Ս Ա Ր Ա Ն

Եսթեր , Էլիզ , Երզնայիսումբը

Օրիորդ մը կ'երգէ քաւերաքերին ետեւէն

Քո՛յր իմ , ո՞ր ձայն ըզմեզ կը կոչէ :

Ուրիշ մը

Կը ճանչնամ անոր շեշտերն հեշտալուր .

Թագուհին է :

Երկուեմ ալ

Փութա՛նք , քոյրեր , հընազանդի՛նք .

Դշխոն ըզմեզ կը կոչէ .

Օ՛ն երթանք , բոլորուինք իրեն շուրջ :

Ամբողջ երզնայիսումբը

այլ եւ այլ կոյրերի քաւերաքեր մեկնելով

Դշխոն ըզմեզ կը կոչէ .

(*) Տեւ թիւ 107, էջ 504

Օ՛ն երթանք բոլորունք իրեն շուրջ :

Ելիզ

Երկի՛նք , ո՛րպիսի խո՛ւռն երա՛մ անմեղ գեղունեաց
Կու գայ երեւան , ամէն կողմէ դուրս կ'ելլէ .
Ինչպիսի՛ համեստութիւն զէմքերնուն վրայ կը փայլի .
Բարգաւա՛ճ զարգացէ՛ք դուք , ո՛վ յոյս ազգին սրբազան ,
Ձեր անմեղ հառաչներն երկինքը թող բարձրանան
Նրման բուրվառին անուշաբոյր կնդրուկին :
Տէրը հաշտ ակնարկներ ձգէ թող միշտ ձեր վրայ :

Եսթեր

Օ՛ն , օրիորդներ երգեցէ՛ք այն երգերէն ,
Ուր յաճախ ձայներնիդ արտասուքիս խառնուելով՝
Թշուա՛ռ Սիոնի աղէտն ի յայտ կը բերեն :

Օրիորդ մը միմակ կ'երգէ

Խեղճ Երուսաղէ՛մ , ո՛ւր են փառքերդ ակնաթով :
Աշխարհ կը հիանար գեղոյդ վըրայ .
Մոխրի կոյտ դարձեր ես . մեծութեանդ առաջին
Կայ միայն յիշատակն , և զմեզ վշտով կը լնու .
Սիոն , ատենով մինչև երկինք բարձրացած ,
Իսկ հիմայ մինչև անդունդ խորասուզուած ,
Լեզուս քիմքիս խալառ կցուի՛ ,
Եթէ վիշտերդ՝ երգերուս մէջ յեղյեղուած՝
Նիւթ մինչև վերջին շունչըս չըլլան խորհուրդներուդ :

Երգչախումբը

Ո՛վ Յորդանանի ափեր , դաշտեր երկնագեղ ,
Արգաւանդ հովիտներ , սուրբ լեռներ ,
Հազար հրաշքներով նըշանաւոր ,
Մեր նախահարց քաղցրը երկրէն
Միշտ վըտարանդուա՛ծ պիտի մընանք :

Օրիորդ մը միմակ

Ե՛րբ , Երուսաղէ՛մ , պիտի տեսնեմ նորոգուած՝ ,
Պարիսպներդ և երկնածայր աշտարակներդ ,
Ո՛հ , Ե՛րբ ամէն կողմերէ
Ձաւակներդ երգելով պիտի դիմեն տօներուդ :

Երգչախումբը

Ո՛վ Յորդանանի ափեր , դաշտեր երկնագեղ ,
Արգաւանդ հովիտներ , սուրբ լեռներ ,
Հազար հրաշքներով նըշանաւոր ,
Մեր նախահարց քաղցրը երկրէն
Միշտ վըտարանդուա՛ծ պիտի մընանք :

(Շարունակելի)

ՕՐՄԱՆԵԱՆԻ

”ՀԱՅՈՅ ԵՆԵՂԵՑԻ”, ՊԻՐՔԸ (°)

(Շար.)

Գ.

Գանք Ս. Բարդղիմէոսի վկայարանութեան, որ Ս. Թադէոսինէն նուազ հիմնեալ է և տար վրայ եղած կցկցուկ մը: Հայր, ինքնապիտի և Ձենոր Դլակայ պատմութեանց հետեւելով, կը պատմէ թէ Ս. Թովմասի հրաւիրանաց վրայ Բարդղիմէոս Հնդկաստան եւ վերադառնալով ուղղակի Հայաստան եկած ըլլայ Թադէոսի մահու ընէ ետք և ասոր աշակերտներն իրենց հաւատքին վրայ հաստատելէ ետքը տեսնելով Սանատրուկի խրատասրտութիւնը՝ չըջած ըլլայ Գողթն, Աղբակ, Նախիջևան եւն. և Հայաստան գալուն՝ Արտաշատի մօտ բլրակի մը վրայ կը հանդիպի Թադէոս-Ղերէոսի և հոն երկուքը միասին խաչ մը կանգնելէ ետքը Հոգւոյն Սրբոյ ազգեցութեամբ կը մեկնին իրենց սահմանուած կողմերը: Հրաշքներու եւ գերբնական միջադէպերու հիւսկէն մըն է անկից ետք պատահածն, մինչև որ սրով կը վիրաւորուի և կենդանի կը քերթուի Սանատրուկի հրամանաւ: Իր վերջին աղօթքին մէջ անգամ մըն ալ կը յիշէ թէ այն երկիրն իրմէ առաջ Թովմաս, Թադէոս եւ Յուդայ առաքելոց քրտածք ողողուած է: Ահա ինչպէս Բարդղիմէոս Առաքելոյն վկայաբանութիւնը՝ Թադէոս Առաքելոյ հէքեաթին մէկ շարունակութիւնն է եղած՝ շնորհիւ հայ իրաւ թէ սուր Թարգմանիչներուն կամ պատմիչներու խաղաղանաց: Եւ այդ աղաւաղումն այսօր քրննադատութեն ըղորովին խայտառակուած՝ աւանդական եւ պատմական աղբիւրներ կ'ըսուին, որոնք ստոյգ եւ անհերքելի եղելութիւնը «կը հաւաստեն»:

Այս եղելութիւնք պատմականօրէն այդքան անստոյգ անհաւաստի ու անհիմն ըլլալէն ետք տեսնենք թէ կրնա՞յ Օրմանեան արդարանալ զէթ այն համեմատութեան մէջ, զոր կը դնէ Ս. Թադէոսի, Ս. Բարդղիմէոսի ի Հայաստան եւ Ս. Պետրոսի ի Հռովմ եր-

թալուն մէջտեղ: Հարկ է սակայն անգամ մըն ալ յիշեցնել ընթերցողաց որ այդ համեմատութիւնն ըրած է Օրմանեան դարձուածքով մը եւ չկարենալով մէկտեղ ուրանալ պատմական ստուգութիւնը, ուզած է մթութեան ստուեր մը նետել Հռովմայ Առաքելապետական գահուն ծագումին վրայ: Նա եւ թաղրել կու տայ թէ Հռովմէական եկեղեցին բոլոր իւր վարդապետական կազմածք հիմնած ըլլայ Ս. Պետրոսի Հռովմի մէջ անցուցած ժամանակին վրայ: Առաքելապետին Հռովմ գացած ըլլալը հոն Հռովմայ եկեղեցին հաստատած ըլլալը եւ հոն մարտիրոսական մահուամբ վկայած ըլլալը ժամանակի խնդրոյն կապել՝ յայտնապէս իմաստակութիւնն է, եթէ ժամանակն ճշտելու համար Գ. Գարէն առաջ յիշատակագիր մը չունինք, ունինք սակայն անհամար ապացոյցներ բուն իսկ եղելութեան, որուն վրայ միայն և ո'չ ժամանակին վրայ՝ հիմնուած է Հռովմայ գահուն եւ եկեղեցւոյն Առաքելապետական ծագումն ու հաստատութիւնը: Այնքան ստոյգ է պատմականօրէն այս մեծ եղելութիւնը, որ Բողոքականի մը բառերը գործածելու համար «անդրքննադական ե (ipercritique) տարակուսի տակ ձգել աւանդութիւնը քե Պետրոսի Հռովմ գացած ըլլայ, աւանդութիւն մը որ հին քրիստոնէութեան միահաւան վկայութեամբ հաստատուած է (Neander Allgem. Geschichte der Christichen Religion und Kirche. 317): Եւ իրօք Հռովմեական նուիրապետութեան մէջ գրելու տեղն սկսել իսկ առաջ, պիտի ըսենք որ ինչ Բողոքականի մը հետ, այնքան տարածուած էր այս աւանդութիւնը, որ կարելի չէ մեկնութիւն մը տալ առանց ընդունելու եղելութիւնը» (Guericke. Haubuch der Kirchengeschichte): Եւ այսպէս ալ է Ս. Կղեմէս Հռովմէացի, Ս. Պետրոսի աշակերտ ու յաջորդ, Ս. Իգնատիոս Անտիոքացի՝ նոյն Առաքելոյն յաջորդ Անտիոքայ Աթոռոյն վրայ, Ս. Պապիանոս Մարտիրոս՝ աշակերտ Յովնանու Աւետարանչի և փոխապացուց Երապոսի Եկեղեցւոյն Եպիսկոպոսը, որոնք ժամանակակից են Առաքելոց, առաջին դարերէն կը վկայեն այս եղելու-

(°) Տես թիւ 405, էջ 474.

Թեան : Առաջինն Հոռովմէն առ Կորնթացիս
գրած Թղթոյն մէջ զգործադրեալներն հալա-
ծանք կրելու խրախուսած ատեն, «Ձգեմք,
կ'ըսէ, հին օրինակները եւ մեզ մօտ ախոյ-
եաններուն գանձ»։ ու յիշելով Պետրոս և Պօ-
ղոս Առաքելոց կրած չարչարանքներն ու վը-
կայական մահը կը յաւելու թէ անոնք Մեթ.
Մէջ (այսինքն Հոռովմէացոց մէջ՝ որ ըսել է
ի Հոռովմ) յաւազոյն օրինակն եղան շատ մը
յկանաց եւ քանգանաց համբերելով : Եր-
կորդն առ Հոռովմէացիս գրելով Զմիւռնիա-
յէն, երբ ասոնք իր մարտիրոսութիւնը խա-
փանելու փորձեր կ'ընէին, կը թախանձէ որ
այդ չընեն ըսելով. Պետրոսի եւ Պօղոսի պէս
չէ որ ձեզ կը հրամայեմ, անոնք առաքեալ
էին, իսկ ես դասաւարտեալ մը. անոնք ա-
զատ էին. իսկ ես ցայսօր ծառայ մը : Սա-
կայն եթէ չարչարուիմ պիտի ըլլամ ազատ-
գրեալ Յիսուսի Բրիստոսի եւ անով պիտի
յառնեմ ազատ» : Կ'ուզէ ըսել Ս. Հայրապե-
տն, ինչպէս Պետրոս և Պօղոս ձեզ հրամա-
յած էին չարգելու իրենց մարտիրոսութիւնը.
նոյնը ո՛չ հրամայելով այլ թախանձանօք կ'ը-
նէ ինքն Հոռովմէացոց, որպէս զի անոնց
պէս ինքն ալ կարենայ մեռնիլ Հոռովմայ մէջ :
Երկորդը կը գրէ թէ Ս. Մարկոս աւետարա-
նիչ իր աւետարանը Հոռովմ գրեց ինչպէս որ
Ս. Պետրոսի բերնէն լսած էր հոն : Նոյնը կը
վկայէ իր ատենէն թէ Ս. Պետրոսի Բարիլոն
կոչած քաղաքն (Ա. ՊԵՏ. Ե. 13), ուսկից
գրուած է այն թուղթն, նոյն ինքն Հոռովմն
է (Եւս. Բ. 14) : — Երկրորդ դարուն հռո-
չակաւոր է Դիոնիսիոսի կորնթացոյն վկա-
յութիւնը (166-175), «Նոյնպէս դուք, կ'ը-
սէ Հոռովմէացոց գրելով, ձեր վարդապետու-
թեան հետ խառնեցիք սերմն. այսինքն զՀոռով-
մէացիներն և զկորնթացիներն, որոնք Պետրո-
սի եւ Պօղոսի սերմանելովն բուսած էին :
Վասն զի այն երկուքն գալով մեր Կորնթոս
բալսօր հոն աւետարանական վարդապետու-
թիւնն սերմանելով զմեզ կրթեցին եւ յիՏԱԼ-
ԻԱ մեկնելով Զմջ կրթելու ասեմ երկուքն
մեկեկ մարտիրոսացան» :

(Շարունակելի)

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՏՕՆԱՅՈՅՑ

Օգոստոս 24	† Կիր. թմ. Բ. եւ Ը. օր	Վերափոխման
25	Բշ. թկ.	Թ. »
26	Դշ. գմ.	Յովակիմայ եւ Աննայի կանանցն իւղաբերից :
27	Դշ. գկ.	Պանոս :
28	Եշ. դմ.	Բաբելայ Հայրապետի եւ Երից աշակերտաց մոռա : Եւ Պիոնի բահամայն եւ Սեփանոսի Ունեցւոյն եւ Արդմսեցի վկային :
29	Ուրբ. թկ.	Պանոս :
30	Շա. ած.	Թովմայի Առաքելոյն :

ՍՈՒՐԲ ԱԼՓՈՆՍՈՍ ԼԻԳՈՒՈՐԻ

Տօնը՝ 2 Օգոստոս

(Շար.)

Վատարանէն ելլելու ատեն արտասանեց սա խօս-
քը. Խաբուսիկ աշխարհ, զեզ կը նանչնամ, այլ եւս
զիս պիտի չխաբես : Տուն որ դարձաւ ամբողջ երեք օր
փակուեցաւ իր սենեակին մէջ, և շատ արցունք թա-
փեց իր խաչելութեան առջեւ : Այս միջոցին որչեզ
փաստաբանութիւնը թողուլ և եկեղեցական վիճակը
ընդգրկել, Խորհուրդ հարցուց իր առաջնորդներուն,
որոնք ևս հաստատեցին իր որոշումը : Բայց հօրը գի-
մեց և խնդրեց որ հաւանի այս իր բարի բաղձանքին,
մերժուեցաւ և յանդիմանուեցաւ խտորէն :

Ալփոնսոս իր վերջը մեղմելու կը ջանար ընկերսի-
րական գործեր ընելով : Օր մը Անրուժեղեաց-հիւան-
դանոցին մէջ գտնուած պահուն յանկարծ նոյն շէնքը
հիմնայատակ կործանուած երեցաւ և ձայն մը լսուե-
ցաւ որ իրեն կ'ըսէր ուժգնակի : Դուն աշխարհի մէջ
ի՞նչ գործ ունիս : Սկիզբը երեւակայութիւն համարեցաւ
այս բանը : Բայց որչափ դուրս կ'ելլէր պիշափ կը շը-
լանար անախաիդ լոյսէ մը, և կործանելու հետ ե-
րեցող հիւանդանոցին թնդիւնին և գլղիւնին մէջէն
միեւնոյն ձայնը դարձեալ իրեն կ'ըսէր. Դուն աշխարհի
մէջ ի՞նչ գործ ունիս : — Այն ատեն համոզուելով թէ
Աստուած կ'ուզէ որ աշտպարէ կատարէ իր որոշումը՝
ինքզինքը բոլորանուէր ողջակէզ ընծայելով աստուա-
ծային կամքին, գոչեց Ս. Պօղոսի պէս, ՏԼՐ, անաւասիկ
եմ, քր՛. զիս ի՞նչ որ հանդէս եկ. եւ այսպէս ըսելով
կը մտնէ Գերիներու-փրկութեան եկեղեցին, ուր նոյն
օրը տեղի կ'ունենար Քառասուն—ժամուց երկրպա-
գութիւնը : Հոն ծնրադրելով պաշտելի Զոհին առջեւ
կ'ազգայէ անոր որ ընդունին իր անձին զոհը : Ապա մե-
կէն կը հանէ մէջքին սուրբ և կը տանի կը կտրէ Շը-
նորհակալութեան Տիրամօր խորանին, իրիւ ստոյգ
գրաւական իր աստուծոյ ըրած խոստման :

Կը շար հօրը հաւանութիւնը : Կրնայ ըսել թէ


այդ հաւանութիւնը աւելի խլաց, յափշտակեց, քան թէ ընդունեցաւ: Աւերջապէս հազար գծաւորութիւններէ վերջ ընդդէմէն եկեղեցական վիճակը, քսան և եօթը տարեկան հասակին մէջ, Իր քարեպաշտութիւնը կրկնապատկուեցաւ: Անձ եւանդով սարկեցաւ աստուածաբանութիւնը: Հիւանդներուն այցելութիւն կու տար, դատաւարաններուն վերջին ժամերուն ներկայ կը գտնուէր և յոսկապէս մեծ սէր կը ցուցնէր տղոց, զորոնք փողոցներէն կը հաւաքէր և սուրբ Խորհուրդները ընդունելու կը պատրաստէր:

Մեր Սուրբը կիսատարկուածութեան աստիճանը ընդունեցաւ 1725 Սեպտեմբեր 22ին. և անմիջապէս վերջը, որպէս զի Տիրոջ աշխարհի մէջ աշխատելու լաւ ևս պատրաստուի, մտաւ Միտրանութեան մը մէջ, որ կապուած էր Նեապոլի թագաւորութեան մէջ քարոզատութեամբ զբաղելու համար: Իր պաշտօնն էր տղոց քրիստոնէական վարդապետութիւն սորվեցնել: Քիչ տառնուած մէջ իր բարութեամբն ու քաղցրութեամբը աշխատէր շահեցաւ գրաւեց սիրտերը, որ երբ ելաւ երկրորդ ամէնքը աղաչեցին որ իրենց քով մնայ: Յաջորդ տարին, ապրիլ 6ին իտալականութեան աստիճանը ընդունեցաւ և միանգամայն քարոզելու հրաման առաւ: Իր առաջին քարոզը առաւ իր թեմին եկեղեցւոյն մէջ: Փառատուն-ժամուց շնորհաւորութեամբ ասան, ի պատիւ հաղորդութեան մէջ ներկայ եղող Յիսուսի: Նկատի առին իր իստքերուն երկնային օծութիւնը և ամէն կողմերէ եկան իրեն մօտիկ ընելու: Բայց քիչ մը վերջը հիւանդացաւ և Ս. Կուսին մէկ մասնաւոր հրաշքովք միայն կրցաւ ազատիլ: Աւուրջանալուն պէս քահանայ ձեռնադրուեցաւ, Ս. Թովմաս առաքելին անկն օրը, 1726ին: Նոյն վայրէկանէն սկսեալ իր կեանքը առաքելութեան յարատեւ քարոզութիւն մը և յորդոր մը եղաւ: Խորանէն՝ ուր կը ճաշակէր հրեշտակաց հացը, ամէն ուժի տէր, կ'երթար կը քարոզէր Աստուծոյ օրէնքն ու սէրը Նեապոլոյ քաղքին և թագաւորութեան ժողովուրդին, հրաշալի դարձեր կ'ընէր, և կ'ըլլար առաքեալ և ծառայ մուրացիներու, ծառածներու, որմնադիրներու, կառապաններու, արհեստաւորներու և ուրիշներու, որոնց կ'ուսուցանէր կրօնը հրապարակներու մէջ և յորդոր կը կարգար ապաշխարելու դարձի գալու:

(Շարունակելի)

ՀԱՅԵՆՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԳՐԲԷՆ



Գրիգ. Ա.—ԳԼ. ԺԳ.—Փորձաքիւններու ղեմ կեցալու վրայ:

Մարդս փորձաքիւններէ երեք յորտովիմ ապահով չէ, իսկի որ կեցաւ: Ե. վասն զի մեր մեքն է այն բանը որով կը փորձուին, յորովեքն ի ցանկութեան ծնած են:

Հազիւ թէ փորձաքիւն մը կամ երկուք մը կը փարատի, իսկայն ուրիշ մը փայլ կուգայ, եւ միշտ կրիշու բան մը պիտի ունենան, քանզի մեր երանկութեան բարիքը կորսնցուցին:

Շատեր կը բանան փորձաքիւններէ փախիլ ու եւս աւելի ծանրապէս կ'իյնան անոնց մէջ:

Միայն փախուսով չեն կրնար յաղթիլ. այլ հաւքերու քանակ ու ճշմարիտ խոնարհութեամբ ամեն բնականութեան աւելի զօրաւոր կ'ըլլան:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

(Շար.)
Զանազան հարցեր(*)

Աղաւակութիւն:— Սակայն այդ ձեռք ծայրայեղ ձեռնադրութիւնը երեք ուղիքի հետեւանք պիտի ունենայ. 1. Կաթողիկոսայք իրենց ձեռնադրութիւնը զլանալով պիտի խափանեն ըլլալիք բարիքը. 2. այս զլացումը մեծ վնաս պիտի հասցնէ կաթողիկէից բարեգործական ձեռնարկներուն, որոնց, փոխադարձաբար, նպաստամատոյց պիտի չըլլան բողոքականք. 3. այս զլացումը բողոքական միջավայրերու մէջ, եւ քիչ մը ամէն տեղ, տիրուր գաղափար մը պիտի ձգէ կաթողիկէ ոգւոյն մասին:

Առ 1.— Եւ յետոյ: Միթէ պարտաւոր ենք ապահովել մեծագոյն կարելի բարիքին իրաւործումը, նկատելով զայն իրրեւ այն, իր թուական պարզ արժէքին մէջ: Բարիք կայ որ պէտք է ընել, բարիք կայ որ պէտք չէ ընել. կարելի է որ բարի գործ մը վտանգուի մեր ձեռնադրութեամբ. բայց կարելի եւ նոյն իսկ ստոյգ ալ է որ այդ ձեռնադրութիւնը՝ ազգու միջոց մը ըլլայ անաղարտ պահելու պահպանելու կաթողիկէութիւնը: Այս գործը միւսէն շատ աւելի կ'արժէ. եւ ամէն պարագայի մէջ, շատ աւելի պարտաւոր ենք զայս ընելու բացարձակ օրէնքով կարգաւոր սիրոյ, որ անձէն կը սկսի:

Ըսինք թէ բարի գործերու մէջ ընտրութիւն ընելու է: Բարի գործեր կան որ յետին աստիճանի վտանգաւոր են պատահաբար. օրինակի համար, այն՝ որով կաթողիկէ

* Տես թիւ 405, էջ 467

մը յանձն կ'առնու ինքզինքը եւ իր գրամը խառնել բողոքականներու եւ բողոքական ձեռնարկներու մէջ, ընկերական միջնորդութեամբ հաստատութեան մը, որ ընկերաբար իրեն բողոքական ծանուցուած է:

Ուշ գրէք այս վերջին բառերուն: Կաթողիկէ ընկերաիրութիւնը երբէք վախճալիք բան մը չունի երբ բողոքող կամ հրեայ կամ ազատամիտ թշուառի մը կ'օգնէ: Այս պարագային՝ զերծ ըլլալով ամէն յատկանշական պայմաններէ կրնայ ամենուրեք ամօքել մեղմել տառապանքը:

Սակայն հոս զմեզ կը հրաւիրեն յատկանշական ընկերաիրութեան մը, բողոքական ընկերաիրութեան մը: Այս տարբեր գործ մըն է: Յանձն չենք առնուր: Թող զմեզ կանչեն փոսին մէջ հոգեվարք ինկող Սամարացիի մը մօտ, կ'երթանք փութով: Բայց եթէ զմեզ հրաւիրեն որ դրամ տանք Սամարացի տնօրէնի մը սամարացի հիւանդանոցի մը, ուր միայն Սամարացիներ կը դարմանուին, եւ այն ալ՝ ըստ որում Սամարացի, յանձն չենք առնուր ամենուրեք: Մեր ընկերաիրութիւնը այն տոտն, հակառակ մեր բարի կամքին, կաղիւնեան լռածին տակ կը մօտէ եւ կը վընասուի: Խոհեմութիւնը թոյլ չի տար որ ան խոտորի այդ վտանգաւոր կողմերը:

Ասկէ զատ, պէտք է լաւ միտ դնել տա բացատրութեան. բարի գործ, որմէ այնչափ կը խաբուին պարզամիտները: Միշտ կ'աշխատուի ցոյց տալ գործի մը բարի կողմերը եւ ծածկել յոռի կողմերը, եթէ ունի: Նկատենք ուշի ուշով եւ աւելի մօտէն մեզի տառաջարկուած դէպքը:

Անշուշտ շատ լաւ է աղքատաց ողորմիլ, դրամով նպաստել որբանոցի պէս մարդասիրական ընկերական հաստատութեան մը, որուն վրայ է խնդիրը այս մեր դէպքին մէջ: Բայց հոս աղքատին հետ բողոքականութիւնն ալ օգնութիւն կը ստանայ, կ'ուժովնայ, ընկերաբար կը հաստատուի իր յարաճուն մոլորութեան մէջ... եւ երբ ըսուի թէ այս ինչ բողոքական որբանոցը շատ բարիք կ'ընէ, ամէն կաթողիկէ որ անոր նպատակը է, կրնայ իր մօքին մէջ աւելցնել: «Ես ալ մաս-

նակից եղայ այս բարիքին, այդ բողոքողներուն թիւը աւելցուցի. ես պատճառ եղայ ընկերական փառաւորութեան մոլորութեան մը, որ հոգիները կորստեան կը տանի, որ իմ հաւատքիս հսկողնեայ է: Այն տանի երանի տնոր, որ կրնայ ինքզինքը արդարօքնել մոռածելով որ ինք բացարձակ հաւրկի մը տակ միայն գործակից է եղեր այդ բանին: Վայ տնոր մը այն տոտն, բայց տնազան, ինք իրեն պիտի ըսէ. «Ինչո՞ւ այդպէս իմ դրամովս աւելցուցի այն զէնքերը, որոնցմով կրօնքիս թշնամիները կ'որսան իմ եղբայրներս:

ՅԻՍՈՒՅ ՔՐԻՍՏՈՍ (*)

Ի Գ Ի Ն Ը Ի Պ Ա Պ

Յիսուս Թիբեռոսցն ափմարեւսափ
ճախա կիւզէլ չիզկիլիւր:

Աւետարանը գլեհաս գազաւ իթմէզ պիր քիթապ ետրան պուրստը արր: Այնի քէլամտա, ետգլաչըմա՝ գաղիլ նուր իլէ ետգլաչըմա՝ գաղիլ օլմանն նուր պիր տրատա թէճէլի էյլէտիյինտէն վէ պիրպիրինէ գարըչարըլնտան, ինտան հէմ հայրէթտէ գալըր վէ հէմ շաչըրըր: Պիր քէրթէ օլուր քի ինտան ալալը գալըրօր գանն իտէր, ֆագաթ քիմ իլէ եիւրիւտլւիւնիւ պիրտիյինտէն, գորգմալ: Արթըր հիւ պիր շէյ կէօրէմէզ հալէ կէտիյինտէ, ինտան սէճաէ էտէր: Պուռտան մատա, պու շէտիտ վէ միւմթէնի էն նուֆուզ օլան նուրըն նէ՝ զատար տա կիւզէլ շիւլէլէրի վար ալըր: Զիյտ վէ հարաթէթին մարքէզի օճալը կէօրիւլէմէյէն կիւնէլէ պէնզէր քի, պու մէրքէզ կէօրիւլէճէք օլսա, կէօլլըրի ետգար, պինտէն ալէյ՝ կիւնէլտէն չըլըպ տա տիւնեայը թէնլիր էտէն վէ պիլ ճիւմէլէ քեաինաթտ կիւզէլլիք պախշ էյլէյէն օնուռն շիւլէլէրի կէօրիւլիւր:

Ինտանճա պու զատար կիւզէլ օլան պիր թապիտթ իլինտէ, նէվի պէնի պէշէրէ աղ միւթ'ալիլի պու լուռն պու զարիպ ալա մէթլէր, միւռաղլըրըրըն նաղարը հայրէթ-

(*) Տե՛ս թիւ 98 էջ 365

լէրինէ բէք զիյառէ չարտողընտան, պու-
խուսուս զօն իքի ասրտան պէրի, պիր վա-
զըթ օլտուղը կիպի, Յիսուս Բրիստոսը՝ սըրֆ
քէնտի զահիրինէ կէօրէ տէյիլ, իլլա ծնուն
մէվճուտիյէթինին սախիլինէ, պաթընընա
նազարէն թէտղըզ վէ թէարիս էթմէյէ պաշ-
լամըշտըրլար: Բուսօ զաթէն ծն սէքիլինճի
ասրտա սաթհի պիր նազարտան սօնրա, չու
մէշհուր սէօղլէրլէ քէնտի նէհթ ու հայրէ-
թինի իզհար իթմիշտի: «Էյէր Սօկրատին հա-
յաթ վէ մէմաթը պիր ազըլլը ատէմ հայաթ
վէ մէմաթը իսէ, Յիսուս Բրիստոսըն էօմրիւ վէ
էօլիւմիւ, պիր Ալլահ էօմրիւ վէ էօլիւմիւ տիր»¹:
Պիզիմ կիւնիւմիւզտէ իսէ, նաքօլէոն քէնտի
գարթալ նազարընը պիր նէպլէճիք Յիսուս
Բրիստոսըն իւզէրինէ հասր իթմէսիյլէ, չու
տահա կիւզէլ սէօղլէրի սէօլլէյէպիլմիշ տիր,
«Պէն քէնտիմի ինսան պիլիյիմ վէ ինսան-
լարը տա թանըրըմ վէ սանա տէրիմ քի Յի-
սուս Բրիստոս եալընըզ ինսան տէյիլտի»²:

Ասըր հազըրը չուարասընըն էն թէնամիւմ
իթմիշ վէ էն միւզթէտիրի օլտուղը գատար
տա էն տինսիլի պուլուսան կէօթէ՝ Յիսուս
Բրիստոսը, Ալլահանի ատէմ, ազիզ, պիլ
ճիւմլէ ինսանլարըն էն քէնտիլի վէ եէկեա-
նէ նիւմուէնէսի նամլարըլա եատ իտիյօր³:
Ամէրիգատա հէմասըլարընըն Յիսուս Բրիս-
տոսըն Ալլահըլընըն Ֆիքրինի թախրիպ իթ-
մէք իլուն օ գատար ճահտ իտէն Չէնիլնկ՝
Յիսուս Բրիստոստա սատէ ինսանըլլա թէֆ-
սիր օլտնմայան շէյլէր մէվճուտ պուլընտը-
նը իսան նա իսան թանըմագտան քէնտինի
ալամազտը: «Չանն իտէրսէյմ Յիսուս Բրիս-
տոս ինսանտան իւսթիւն պիր շէյ տիր» տէր
վէ շէօլլէճէ իլավէ իտէր իտի: «Օտուն Ալ-
լահըլընըն ինքեար իտէնլէր՝ պուլընը եար-
մազլա ծնը սատէ պիր ինսան եէրինէ գօմուշ
օլմազլար: չիւնքի տաիմա ծնուն վէ պիզիմ
արամըլտա պիր ֆարզը քիւլլի գօրլար»:
Յիսուս իլէ Ալլահ արասընտա պիր իսուսուսի

սամիւմիյէթ վար օլտուղընը, Յիսուստա ին-
սանլարըն հիշ պիրինին մալիք օլմամըշ օլ-
տուղը մէվճիպէլէր, աթիեէլէր, գուվվէթ-
լէր, եարտըմլար մէվճուտ իտիկինի վէ ծնըն
շաիպէտէն միւզէրրա պիր թէմիլիլէրլէ թէ-
մէյիւլը իթտիլինի, պինաէն ալէյհ տէ ծնտա-
քի սէմալի ֆարզը ազիմի իզրար իտէրլէր:
Յիսուս Բրիստոսըն քէնտի ազամէթի վէ
լութֆըլլա պիլճիւմլէ ինսանի թէֆմիլլիք-
լէրտէն տահա իւսթիւն պուլընտըլընա քեաֆ-
ֆէսի տէ մէսէրրէթլէր րազի գայիլ օլուրլար»¹:

Նիհայէթ ասըր հազըրտա բէք հազընտան
Յիսուս Բրիստոսըն թապիաթընա տիգգաթ
էտէնլէր, ֆազաթ ատալլէթ վէ իսուսուսթ
նազարլարըլա ծնա պազարագ աչրգտան ա-
չըլա ծնա տիւշման օլմագ թարաֆընը իլ-
թիզամ էյլէյէնլէրտէն Ալմանիատա Շթրաուս,
Ամէրիգատա Թարքըր վէ Ֆրանսատա տախի
Բընան չու մանատար սէօղլէրի ազըլլարըն-
տան գաչըրմագտան քէնտի քէնտիլէրի ալա-
մամըշ տըրլար: Շթրաուս շէօլլէ սէօլլէր:
«Բուհանի հայաթտա Բրիստոսըն արգասըն-
տան քէնտինի կէշէպիլէճէք, եախօտ հիշ
տէյիլսէ քէնտինին վասըլ օլմուշ օլտուղը
տէրէճէի քէմալա էրէճէք սուրէթտէ քիմսէ
կիտէմէլ: Հիշ պիր վազըթ ծնտան եիւքսէք
եախօտ ծնա միւսալի պիր մէրթէպէյէ իր-
թիֆա իթմիշ քիմսէ թէսալվուր օլընամագ»²:

Բարքըրըն եազալըլարը տահա վազիլ վէ
տահա աչիքեար տըր: Չանն իտէրսին քի
Յիսուս Բրիստոսըն լաթիֆ թապիաթը արա-
սընտան սըզարճասընա սէզիլէն Ալլահըզ ծնա
նիւմահան օլուր: Յիսուս եէնի պիր նուր
նէշր իտէր, ծնուն նէշր իթտիլի պուլ նուր
կիւնտիւզ կիպի բարլագ, ապիւման կիպի
պէրրագ վէ ճէնապը Հագգ կիպի հազըգի
պիր նուր տըր: Օ ֆէյլէսօֆլարտան, շաիր-
լէրտէն, մարգարէ վէ պաշ քեահիլէրին
ճիւմլէսինտէն տէ տահա եիւքսէք տիր: Մա-
մաֆիյհ, նազարէթ, ֆէլսէֆէ հէվասը թէ-
նէֆֆիւս իտիլէն պիր Աթինա տէյիլ տիր:
օրատա նէ էնճիւմէնի տանիշ վէ նէ տէ մէշ-

¹ Rousseau, Emile ou l'Education, livre VI.

² Beauterne, sentiment de Napoléon sur le Christianisme.

³ Goethe, Entretiens avec Eckermann 3. vol. p. 371.

¹ Channing, discours sur le caractère du Christ.

² Straus, du passager et du permanent dans le Christianisme, Altona 1839, p. 127.

հուր տար իւր ֆինոնլար մէվճուտ իտի, պիր բէյզամպէր մէքթէպի պիլէ եօդտը: Ֆազաթ պու կեճճիճ գալպիճսէ Ալլահ վար քըր եօլունտա իտարէի քէլամտա պուլունուր վէ ծնտա Ալլահլըզ վար օլտուղունա հիւքմ իտէրտի: ¹

Իշթէ Րընանըն տա սէօղլէրի. «Էյ միւթէշէպպիսի նէճիպ, շիմտի արթըզ շէրէֆ վէ ինթիշամ իշխնտէ իսթիրահաթ էյլէ: Էլ վուրմուշ օլտուղըն իշ պաշա չըգմըշ տըր: Վազիֆէն իքմալ օլմուշ տըր: Սէն էօլլամիւնտէն սօնրա, շու ալէմտէ կէշիրմիշ օլտուղըն մուվազգաթ հայաթտան պին գաթ գիյատէ տիրի, պին գաթ գիյատէ սէվիլմիշ պուլունտըն: սէն պէշէրիյէթէ օտէրէճէտէ պիր քիւշէ թաշը օլաճագըն քի պու տիւնեատան սէնին իսմինի գալտըրմագ պէշէրիյէթի թաթէմէլլէրինտէն սարսմագ օլաճագ տըր: Սէնին իլէ Ալլահ արասընտա պիր ֆարզ կէօրիւլէմէշէճէք տիր: Սէն էօլլամիւ քեամիլէն մաղլուպ էյլէմիշ օլտուղընտան արթըզ շիմտի բատիշահլըղընա սահիպ օլ: Բէրէսթիշ իսէն ասըլար սէնին աշմըշ օլտուղըն շէհրահաան բատիշահլըղընա տօղրու սէնին արգանտան Վէշէճէք տիրլէր: ²

Նէրէլէրէ վասըլ օլտուղընըզ կէօրիւլլւյօրմը: Էն տաղընըզ, էն տաղըն, էն տիւշմէն միւտագզըզլարըն պիլէ թէտգիգաթընտա Յիսուս Բրիստոսըն լէքէսիզ բաքլըղընա, քէմալաթը ալապգիյէսինէ, միսլի պուլունմաշան կիւզէլլիյինէ դարչը նախահ պիր հիւրմէթ, միւթէզայիտ պիր թէսճճիւպ կէօրիւլմէքտէ տիր: Ջանն իտէրսին քի ճինսիմիլին թարիխինտէ կէօրիւլմիւշ օլան ազիլլէրին էն ազիլի, շու քիւրքէի արգա գատէմպասմըշ օլանլարըն էն պէօլլիւլ վէ էն ալասը օլտուղընա կիթտիքճէ վազըֆ օլույօրլար վէ պու խուսուստա միւթթէֆիք պուլունույօրլար: Հաթթա ծըր օ գատար պէօլլիւք, օ գատար էյի վէ ծն սէքիզ ասըլար կէշմիշ օլտուղը հալտէ օ գատար տիրի պուլույօրլար քի պիզգաթ միւթէֆէքիլլէրին էն էյիլէրի

պիլէ իսթէր իսթէմէզ, աճէպա Յիսուս սատէճէ պիր ինսան մը սըր տէյի քէնտի քէնտիլէրէ սօրմազա մէճպուր օլտուղլարը կիպի: տիւշմէնլէր տախի պիլա իսթիյար աշնի սիւալըն իրատընա մէճպուր պուլունույօրլար: Իմտի պու մէրքէլտէ պիր սիւալ վապը օլմասը, պու եօլտա պիր շիւպհէ տօղմասը, պաշա հիշ պիր ինսան իշուն վապը օլմուշ օլմայան պէօլլէ պիր սիւալ վէ շիւպհէնին իշալէսինէ չալըշըլմասը պիլէ աճէպա հատար զաթընտա պիր գաննը զալիպ, ծնուն Ալլահլըղընըն իւք պիր պիւրհանընը թէշքիլ իթմէզ մի:

(Մապասի վար)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ռ Ո Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Ե Խ Ա Ր Զ

Պէռնտէթ Սուպիւր, որուն Ս. Կոյը երեւցաւ Լուրտի մէջ, եւ որուն սրբազուցման գործին ձեռնարկուած է վաղուց, Երոնուհի հռչակուած է Ս. Աթոռին կողմէ: Այս ցանկայի եղելութիւնը բոլոր աշխարհի մէջ և յատկապէս Ֆրանսայի մէջ, մեծ ուրախութիւն և խանդավառութիւն յառաջ բերեալ է:

Ամուսնան տաքերուն հակառակ ուխտաւորներու խուճեր հետզհետէ հոռւ կը համին և Ս. Բոհանայապետին սենյնդքութեան կ'ընդունուին:

Նէօլթէլի բողոքական մէկ թերթը, Ալգուս Ջուիլիֆու, վատիկանի անձնագահ գօրայ՝ ծանօթ ըմբոստութեան մասին կը գրէ:

«Չուիցերացի գունդին ըմբոստութիւնը առիթ տուաւ մի քանի (խաղաղան) թերթերու, անուանորկելու մեր կառավարութիւնը, մեր բանակը և ծաղրելու մեր հայրենիքը: Սակայն գիտնայու է թէ այդ շարժումին բուն պատճառը այն զայրոյթն է, որ կը զգացուի ինչ ինչ տեղեր, ստոր գորագունդի մը վատիկանի մէջ քնալուն համար: Այն օ էն ի վեր որ Ռերոն գորավարը այդ գունդը վերակազմեց և այնպէսով քահանայապետական զուիցերացի պահանջորդ նշուակ եղած ծագածութեանց առջեւ առաւ, իրեն և իր ամէն վերանորոգական ձեռնարկներուն դէմ կռիւ մին է սկսու: Հիմալ ստոյգ գիտեմ որ ըմբոստները ոչ միայն բարոյապէս քաջաբերուած են թերթերու կողմէ, այլ նոյն իսկ նիւթական օգնութիւն ընդունին եւ և Հռոմի լրագիրները փութացին եւ փառահացնելու ըմբոստապետները որ չպիտի լքուին իթէ արաքսուին: Խօսքերին բռնեցին, և անոնց գրածովն է որ ըմբոստները կրցան գործերնին կարգադրել:»

¹ Ch. Parker, Discours sur les matières relatives à la Religion. p. 275.

² Renan, Vie de Jésus, p. 426

Վախճանեցաւ Ապանիոյ ծերակուտին անդամ Մանուէլ Մարքիզը, իր Գապակիւնէլա ամուսնացին մէջ:

Հանգուցեալը ծնաւ 1855ին, Մարտիտի երիտօթան ընտրուեցաւ 25 տարեկան հասակին մէջ. այլ եւ այլ քաւառներէ վերջնորոշուով՝ եղաւ խորհրդարանի փոխնախագահ և Մարտիտի ընդհանուր ժողովին նախագահ: 1903 Մայիս 8էն ի վեր ծերակուտական էր:

Հանգուցեալը կաթողիկէ ամենէն հանրածանօթ դէմքերէն է և Մ. Սորոյի քաղաքականութեան ամենաջերմ կուսակիցներէն. առ քաղաքականութիւնը պաշտպանեց գործով ու խօսքով, և իր համոզումները յարգել տուաւ նոյն իսկ իր հակառակորդներուն: Կաթողիկէ գործաւարական և բարեգործական կազմակերպութեանց պաշտպանն էր:

Զուեցերացի կաթողիկէից Դ. համաժողովը տեղի ունեցաւ այս ամսուն Սէն-Կալ քաղաքին մէջ խանդավառ հանգէսներով ու թափօրներով. որոնց կը մասնակցէին 25 հազարէ աւելի մարդիկ, 230 խումբերու բաժնուած և 38 նուագախումբէ առաջնորդուած: Այս համաժողովին յաջողութիւնը ակնկալուածէն շատ աւելի եղած է:

Ֆրանսայի կրթական նախարարը, Մ. Պարթու, չըբարեբախտ մը հանեց նկատմամբ գլորդական դասագիրքերու, որուն մէջ կը ճանչնայ և կը հաստատէ թէ ընտանեաց հայրերը իրաւունք ունին քննելու իրենց զաւակաց դասագրքերը:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Օգոստոս 18ին, Աւստրիոյ կայսեր տարեգարհին առթիւ, աւստրիական դեսպանատուն գնաց Արհի. Յովսէփ Արքեպ. Ռոքուսեան Կ. Պատրիարքական փոխնորդը, ընկերակցութեամբ Յովհաննէս Ե. Վ. Թուսայեանի, և Վսեմ. Բալլավիշինի մարքիզին մատուց Ամեն. Հոգեւոր Տիրոջ Զերմ շնորհաւորութիւնները:

Գեապանք շատ սիրալիր ընդունելութիւն ըրաւ Ն. Արհիպատուութեան:

Ն. Արհիպատուութիւնը ընկերակցութեամբ Գեր. Էքմէքճեանի տյցելեց Բարեպէն վերագարձած Ֆրանսական դեսպան Մ. Պոլիարի, և Հոգեւոր Տիրոջ կողմէ բարի դպրուստ մտղթեց անոր և միանդամայն ցաւակցութիւն յայտնեց Թարսպիայի դեսպանատան հրդեհման առթիւ:

Արհի. Մայոյեան Մերանի Արքեպիսկոպոսը, Յունիս 28ին Հռոմէն Պէյրութ հասեր է և երկու օր վերջը իր թեմը մեկնեց է, հետը ունենալով Վերապ. Հ. Պ. Գառարեանը և Գեր. Գաբրիէլ Վ. Գաթմարճեանը:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Բ. Գուռը Օգոստոս 19ին մեծ տէրութիւններու մօտ գտնուող օսմ, դեսպաններուն հեռագրեց նոր ծանուցագիր մը եւրոպական դահլիճներուն հաղորդուելու համար: Բ. Գուռը իր այս նոր ծանուցագրին մէջ կը թուէ Պուլկարներուն գործած խժգժութիւններն ի Թրակիա, մասնաւորապէս այն վայրերուն մէջ, որոս հիլէն զօրքերը պարպեցին: Ծանուցագիրը ի վերջոյ կը հրաւիրէ մեծ տէրութիւնները որ լուրջ ձեռնարկներ ընեն ի Սօֆիա, քանդուած և փճացուած այս գործին վերջ տալու համար: 15 օրուան մէջ այս երբորդ ծանուցագրին է որ օսմ. կառավարութեան կողմէ կը տրուի մեծ տէրութիւններուն: Երկրորդ ծանուցագրին մէջ Բ. Գուռը կը յայտարարէ որ եթէ Պուլկարները շարունակեն իրենց խժգժութիւնները, Թուրքիա պիտի ստիպուի Մարիզա գետն անցնիլ և կրնայ ըլլալ որ պուլկար կառավարութեան դէմ խիստ միջոցներ ձեռք առնուին: Այս վերջին հատուածը օսմ. դեսպաններուն կողմէ տարբեր ձեւերով խմբագրուած էր: Վերջին ծանուցագրին մէջ Բ. Գուռը հարկ տեսած է փոխել այն շեշտը որ գործածուած էր երկրորդ ծանուցագրին մէջ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ	529
Մահացու կիւնան	531
Եր. Տէր Կոմիսսու Նահասակին պատմական երկու գրութիւններ	533
Եսքեր	536
Օրմանեանի «Հայոց Եկեղեցի» գիրք	538
Եօթնեակ Բրիտանի	539
Եկեղեցական-գիտական խնդիրներ.	540
Յիսուս Բրիտան	541
Տեղեկագրական	543

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՐԱԳՐԱՊԵՏ

ԳԷՈՐԳ Ե. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԵՏԵԱՆ

Տպագր. Կ. Արձագանգ Շաքարաթերի, Բերա, Պայամ փողոց թիւ 5, Կ. Պոլիս

Երանելի Տէր Կոմիտաս Քահանային վարքը, առանձին հրատարակուեցաւ ընտիր Թուղթի վրայ, մաքուր տպագրութեամբ և երեք պատմական պատկերներով:

Փափաքելի է որ ամէն Հայ Կաթողիկէ ունենայ այս գեղեցիկ մատենիկը, որուն միակ նպատակն է ծանօթացնել ամէնուն Երանելի Նահատակին գերազանց բարեմասնութիւնները, և, անոր ջերմեռանդութիւնը ծաւալելով, հրաւիրել ամէնուն վրայ անոր բարեխօսութեան անզուգական արգիւնքները:

Գին 5 դահեկան, էջ 144 ամուր թղթակազմ

Գրքոյկիս երեք պատկերները, 1. Տէր Կոմիտաս քահանայական զգեստով և իր շիրիմը, 2. Տէր Կոմիտաս դատաւորին առջև, 3. Գլխատումը, առանձին ալ կը ծախուին. մեծաքանակ գընողներու, գոհացուցիչ գեղջ:

ԿԸ ԾԱԽՈՒԻ ԵՍՏՐԱԿԱՆ ՍԿՂԵՐՈՆԲ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐՂԱՎԵՅՈՒՅԵԱՆ՝ հաստատելու եկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալս Բաղկացած է 136 էջերէ. Գին, ամուր քղթակազմը 2 դնկն.:

ԲԱՅԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՆՆԵՐ.— Կարգի խնամար, սարեկան՝ 40 դնկ. արծ. վեցամսեայ՝ 20.—
մէկ քիւ՝ 1 դնկ.:— Արաքսահման՝ ար. ճր. 10. վեցամս. 5.— Վնարմունք կանխիկ են:
ՀԱՍՑԷ.— Կարողիկե Արմաղանգ, Յերա, 5 Պայրամ փողոց՝ 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Bairam 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արաքսահմանը կը նրաստարակուի Շաքաք օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտա-
ւարեալ չէ անպատշաճ կամ նշանաբանի նրաստարակել իրեն զրկուած ու եւ յօղուած: 3.— Կեղծանունով զրկուած
յօղուածներու հեղինակը կը պարտաւոր իսկական անունը ծանուցանել Խմբագրութեան: 4.— Ձեռագիրներ եւ չեն
զարժուիլ: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէ՛տ է գրուած թղթին մէկ կողմը միայն: 6.— Ծանուց-
մանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէ՛տ է անհրա-
ժեշտ երկու պանեկամի նամակագրուել ի միասին զրկել:

ՏՊԱՐԱՆ Կարողիկե Արմաղանգի Յերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս բոլոր տեսակի տպագրութիւններու ի վիճակի է
որ եւ իցէ տպարանին գործոց խնամար: Կը տպուին ամէն տեսակ ծանուցումներ, զրկեր, տեսներ, հրապարագիրներ,
բարդեր, բարդ-աստղաներ, մանուկներ, եւն., եւն.: Դիւնէր անմեղեղի կերպով տպան են: Դեղեցկագիտական նա-
ւանքի եւ տպարանական մանուկներու կողմանէ յանձնարարներ անստակեղծ գոյ պիտի մնան: